ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/237

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Մասնակից՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15175-2020 գրությամբ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 30.09.2020թ. թիվ 02/16.4/7652-2020 գրության հիման վրա, 06.10.2020թ.-ին «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.10.2020թ.-ին:

07.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/237 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 30.09.2020թ. թիվ 02/16.4/7652-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի օգոստոսի 28-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25 ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի և գ. Կաթնաղբյուրի միջնակարգ, ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու և գ. Մեդովկայի հիմնական, ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն և Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի երկրորդ չափաբաժնին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<Նորայր և ընկերներ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել: Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15175-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ .../կցվում է/:

Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և ծանուցել 2.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնավորապես, մասնակցից պահանջվել է ներկայացնել Կարգի 60-րդ կետով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն՝ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ–ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է 22.09.2020թ. և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված ամհանապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մասամբ:

Եվ նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Կարգի 42-րդ կետի պահանջների համապատասխան՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի՝ «Գնում կատարելու ընթացակարգերը և դրանց կիրառման պայմանները» վերտառությամբ 3-րդ բաժնի՝ 22-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի Մին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

2. Պետական գաղտնիք պարունակող գնումները գնանշման հարցման ձևով իրականացվելու դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել պատվիրատուից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները:

3. Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

Օրենքի նույն բաժնի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Նախաորակավորման ընթացակարգ կազմակերպելու դեպքում՝

1) այդ մասին հրապարակվում է նախաորակավորման հայտարարություն.

2) խորհրդատվական ծառայության, երկու փուլով մրցույթի կամ փակ նպատակային մրցույթի կիրառման դեպքում նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն 15 օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից.

3) եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, կամ գնումը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1–ին կետի «դ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների կողմից, կամ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և սույն մասի 2-րդ կետով նախատեսված ժամկետի կիրառումը անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն

հինգ օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից:

Կարգի 23-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս, օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի, պետք է հաշվի առնել, որ ծրագրային ապահովման, ներառյալ եթե այդ նպատակով կնքվելիք պայմանագրի գնի հիսուն տոկոսից ավելը վերաբերում է ապարատային ապահովումներին, ինչպես նաև շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնումը համարվում է խորհրդատվական ծառայություն, և դրանց ձեռքբերումն իրականացվում է օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով:

Կարգի 60-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1–ին կետով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում ...:

Կարգի 68-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ, եթե գնումը կատարվում է՝

1) երկփուլ մրցույթով.

2) փակ նպատակային մրցույթով.

3) փակ պարբերական մրցույթով.

4) պետական գաղտնիք պարունակող գնանշման հարցման ձևով.

5) խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով՝ բաց մրցույթով կամ փակ նպատակային մրցույթով:

ա) Այսպիսով փաստում ենք, որ խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով գնում կատարելու դեպքում պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ:

Հարկ ենք համարում արձանագրել նաև, որ օրենքի 6-րդ հոդվածի 3–րդ մասի 1-ին կետով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում, ինչպես թելադրված է Կարգի 60-րդ կետով: Ուստի բոլոր մնացած դեպքերում «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշ հրավերով չի կարող սահմանվել, եթե չի կազմակերպվել նախաորակավորման ընթացակարգ:

Հրավերի 2-րդ կետով՝ մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգով սահմանվել է «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չէր կարող կիրառվել նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման կանոնները, այն է՝ մասնակցից պահանջել ներկայացնել Կարգի 60-րդ կետով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, առավել ևս պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ–ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/:

Ուստի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ շտկում ներկայացնելու ոչ իրավաչափ պահանջի արդյունքում համապատասխան շտկում չկատարելը, «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կարծիքով, չի կարող որակվել որպես ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և համապատասխանաբար, չի կարող առաջացնել մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու հետևանք:

բ) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացա-կարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի արդյունքում նիստը կասեցվել էր և որոշում է կայացվել ծանուցել 2.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Իսկ արդեն Ընթացա-կարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է 22.09.2020թ. և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

արձանագրված ամիանապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մասամբ և արդյունքում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Եվ այսպես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրելով, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, որը շտկելու համար Ընթացակարգի քարտուղարին առանձնահատուկ հանձնարարվել էր, որպեսզի վերջինս՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցի՝ առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը ՍՊԸ-ն շտկի անհամապատասխանությունը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընթացակարգի բոլոր մասնակիցներին է ուղարկվել ընդամենը նիստի արձանագրությունը, որը ըստ գնահատող հանձնաժողովի՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն պարտավոր էր ընդունել որպես անհամապատասխանության շտկման ծանուցում:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ Կարգի 41-րդ կետի և 43-րդ կետի 1-ին ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ պարտավոր էր հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակեր տեղեկագրում, ինչպես նաև նույն քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սակայն գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից խախտվել է վերը նշված կարգով սահմանված պահանջները, քանի որ ինչպես արդեն նշել ենք, մասնակցին ոչ թե ուղարկվել է ծանուցում՝ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, որից պարզ կլիներ առնվազն շտկում կատարելու վերջնաժամկետը և այն էլ. հասցեն, որին պետք է ուղարկվեր շտկված փաստաթուղթը, այլ ընդամենը ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընթացակարգի բոլոր մասնակիցներին ընդամենը ուղարկվել է նիստի արձանագրությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով, գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ, Ընթացակարգի Հրավերի պահանջների խախտմամբ, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում՝ Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի մասով գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն:

iii. «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- Հավելված 1.2 ում՝ ծառայությունների մատուցման մեթոդաբանության մեջ ներկայացված չէ Աշխատանքների ընդունման նկարագիրը,

- Մասնագետների փորձառության գնահատման համար ներկայացված չէ տվյալ շինարարական օբյեկտի սահմանված կարգով մշակված և հաստատված ավարտական ակտի պատճենը կամ Գործատուի կողմից տրված գրավոր հավաստումը,

- Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսների մասով ներկայացված, Մասիս Օհանյանը և Կարեն Շավարշյանը, Վազգեն Հովսեփյանը և Արսեն Բաբայանը ներառված չեն մասնակցի լիցենզիայի ներդիրներում, ինչպես նաև ներկայացված չէ այլ հիմնավորող փաստաթուղթ, համաձայն որի վերջիններս ներառած են այլ կազմակերպության լիցենզիայի ներդիրներում,

- Մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերով և հանձնման-ընդունման արձանագրություններով ծավալ սահմանված չէ, համաձայն որի վերջինս ունի հրավերով պահանջվող ցուցանիշ՝ առնվազն 1000քմ մակերես:

v. Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայանը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 22.09.2020թ.-ին Մասնակցի nmuradyan55@mail.ru էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 22.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրությունը:

vii. Հանձնաժողովի 24.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն, վերջինիս փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին, ծանուցվել է 22.09.2020թ.-ին և առաջարկվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել Մասիս Օհանյանի, Կարեն Շավարշյանի, Վազգեն Հովսեփյանի և Արսեն Բաբայանի մասնակցի լիցենզիայի ներդիրներում ընդգրկված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի կամ այլ հիմնավորող փաստաթղթեր՝ նրանց այլ կազմակերպության լիցենզիայի ներդիրներում ներառված լինելու մասին:

viii. Նույն արձնագրության 1.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15175-2020 գրությամբ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված խորհրդատուն որոշվում է ներկայացված հայտերից՝ հրավերով նախատեսված ոչ գնային նվազագույն պայմաններին համապատասխանող գնահատված և ամենացածր գին առաջարկած մասնակցի ընտրության մեթոդով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի համաձայն՝ Մասնակցի հայտի գնահատումը յուրաքանչյուր չափաբաժնի մասով իրականացվելու է հետևյալ չափանիշներով և կարգով.

Մասնավորապես՝ խորհրդատվական ծառայություն մատուցող պատասխանատու (անձինք) մասնագետները, մրցույթի մասնակցի կողմից գնման հայտը ներկայացվելու պահին պետք է ներառված լինեն համանման ծառայություններ մատուցող որևէ ընկերության համապատասխան գործունեության լիցենզիայի ներդիրում կամ ներդիրներում, իսկ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում՝ ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող (պայմանագիրն) համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30-օրյա ժամկետում, պետք է ապահովեն ներկայացված մասնագետների ներառումը մասնակցի

լիցենզիայի ներդիրներում /ցանկով պահանջվող աշխատակիցները՝ յուրաքանչյուրը իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար, հանդիսանալու են պատասխանատու անձ, ինչի մասին հավաստումը պետք է լինի կատարողական փաստաթղթերի ընդունման ակտերը ստորագրությամբ հաստատելը/:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթզղթերը:

Հանձնաժողովը 22.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2 ում՝ ծառայությունների մատուցման մեթոդաբանության մեջ ներկայացված չէ աշխատանքների ընդունման նկարագիրը, մասնագետների փորձառության գնահատման համար ներկայացված չէ տվյալ շինարարական օբյեկտի սահմանված կարգով մշակված և հաստատված ավարտական ակտի պատճենը կամ գործատուի կողմից տրված գրավոր հավաստումը, Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսների մասով ներկայացված, Մասիս Օհանյանը և Կարեն Շավարշյանը, Վազգեն Հովսեփյանը և Արսեն Բաբայանը ներառված չեն մասնակցի լիցենզիայի ներդիրներում, ինչպես նաև ներկայացված չէ այլ հիմնավորող փաստաթուղթ, համաձայն որի վերջիններս ներառած են այլ կազմակերպության լիցենզիայի ներդիրներում, ներկայացված պայմանագրերով և հանձնման-ընդունման արձանագրություններով ծավալ սահմանված չէ, համաձայն որի վերջինս ունի հրավերով պահանջվող ցուցանիշ՝ առնվազն 1000քմ մակերես, ինչից ելնելով որոշում է կայացվել կասեցնել գնման գործընթացը և ծանուցել Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխա-նությունը (Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսների մասով ներկայացված, Մասիս Օհանյանը և Կարեն Շավարշյանը, Վազգեն Հովսեփյանը և Արսեն Բաբայանը ներառված չեն մասնակցի լիցենզիայի ներդիրներում, ինչպես նաև ներկայացված չէ այլ հիմնավորող փաստաթուղթ, համաձայն որի վերջիններս ներառած են այլ կազմակերպության լիցենզիայի ներդիրներում) չի շտկվել, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը մերժվել է:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն

սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում, ինչպես թելադրված է Կարգի 60-րդ կետով: Ուստի բոլոր մնացած դեպքերում «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշ հրավերով չի կարող սահմանվել, եթե չի կազմակերպվել նախաորակավորման ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետով, «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշից բացի սահմանվել է նաև Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ: Մասնավորապես՝ խորհրդատվական ծառայություն մատուցող պատասխանատու (անձինք) մասնագետները, մրցույթի մասնակցի կողմից գնման հայտը ներկայացվելու պահին պետք է ներառված լինեն համանման ծառայություններ մատուցող որևէ ընկերության համապատասխան գործունեության լիցենզիայի ներդիրում կամ ներդիրներում, իսկ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում՝ ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող (պայմանագիրն) համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30-օրյա ժամկետում, պետք է ապահովեն ներկայացված մասնագետների ներառումը մասնակցի լիցենզիայի ներդիրներում /ցանկով պահանջվող աշխատակիցները՝ յուրաքանչյուրը իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար, հանդիսանալու են պատասխանատու անձ, ինչի մասին հավաստումը պետք է լինի կատարողական փաստաթղթերի ընդունման ակտերը ստորագրությամբ հաստատելը/:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/25» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում կարող էր նախատեսվել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ ներկայացվելու պահանջ:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին ներկայացված ծանուցման ոչ պատշաճ՝ Կարգի 41-րդ կետի խախտմամբ ուղարկված լինելու դիրքորոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատաս-խանությունները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որը հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ դրա կից ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն դեպքում, Մասնակցին ուղարկված շտկման մասին ծանուցմամբ, Հանձնաժողովի քարտուղարը կցել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության արտատպված տարբերակը, որում հստակ և մանրամասն նշված են արձանագրված անհամապատասխանությունները և դրանք շտկելու ժամկետը: Ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումից բացի նույն արձանագրությունը Մասնակցին է ուղարկել նաև էլ. փոստի՝ tender4@minurban.am հասցեի միջոցով:

Հատկանշական է նաև, որ Մասնակցի կողմից թիվ 2-2 արձանագրությամբ վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասնակի՝ չեն ներկայացվել Մասիս Օհանյանի, Կարեն Շավարշյանի, Վազգեն Հովսեփյանի և Արսեն Բաբայանի մասնակցի լիցենզիայի ներդիրներում ընդգրկված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի կամ այլ հիմնավորող փաստաթղթեր՝ նրանց այլ կազմակերպության լիցենզիայի ներդիրներում ներառված լինելու մասին:

Վերոգրյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Մասնակիցն իրազեկվել է և հնարավորություն է ունեցել իրապես պարզելու ծանուցմամբ պարունակվող՝ կցված արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները, դրանք շտկելու միջոցները և ժամկետը, որը, սակայն, սահմանված շտկման ժամանակահատվածում վերջինիս կողմից չի ներկայացվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից 05.11.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված մասնակիցների երաշխավորված իրավունքները սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, Կարգով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով: Այդ նորմատիվ ակտերով է ապահովվում նաև ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու իրավունքը և այդ իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալները, որպիսիք չպահպանելու արդյունքում կխախտվի բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Ամփոփելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ բողոքարկման (ընթացակարգի) քննությանը ներգրավված մասնակիցները պետք է իրենց վերապահված իրավունքները, օրենքով սահմանված բողոքարկման (ընթացակարգի) 30-օրյա քննության ժամկետում, իրացնեն այնպես, որ որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում, հարկ է փաստել, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հրապարակման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը (ժամանակացույցը) հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում 03.11.2020թ.-ին, իսկ որոշման հրապարակման օր է սահմանվել 06.11.2020թ.-ին ժամը 14:35-ին, որպիսի պայմաններում ընթացակարգի քննությունը, ըստ էության համարվել է ավարտված, իսկ օբյեկտիվ, լրիվ և ճիշտ որոշման կայացման համար և դրան ուղղված գործողություններն էլ՝ սպառված:

Այնուամենայնիվ, Բողոքներ քննող անձը Մասնակցի կողմից 05.11.2020թ.-ին ներկայացված լրացուցիչ դիրքորոշման վերաբերյալ հարկ է համարում է նշել նաև հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանի 18-րդ կետի համաձայն՝ … Բողոքի քննության արդյունքում Անձն իրավասու է առերևույթ նույնանման, սակայն հիմքերով տարբեր դեպքի վերաբերյալ կիրառել նախկինում իր կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներից և մեկնաբանություններից տարբերվող իրավական դիրքորոշում և/կամ մեկնաբանություն, այդ մասին հատուկ նշում կատարելով որոշման մեջ և ամբողջական ու սպառիչ հիմնավորելով նախկինում արտահայտված դիրքորոշումից և/կամ մեկնաբանությունից շեղումը:

Վերոնշյալ կետի բովանդակությունից հստակ է, որ Բողոքներ քննող անձը պարտավոր է կիրառել նախկինում իր կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներից և մեկնաբանություններից չտարբերվող իրավական դիրքորոշում և/կամ մեկնաբանություն՝ **իր կողմից նախկինում կայացված որոշումների** առերևույթ նույնանման փաստական և իրավական հիմքերով գործերի վերաբերյալ:

Այսինքն՝ Բողոքներ քննող անձը կաշկանդված չէ գնումների հետ կապված մեկ այլ բողոքներ քննող անձի կողմից նախկինում կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և մեկնաբանություններով: Ինչպես նաև այդ որոշումները չեն կարող հանդիսանալ նախադատելի հանգամանք:

Իսկ ինչ վերաբերում է նախկինում կայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը, ապա այդ որոշմամբ քննության առնված (քննությամբ հաստատված) և սույն ընթացակարգի փաստական հանագամանքները տարբեր են: Սույն որոշմամբ վերը նշված պատճառաբանություններից բացի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 ծածկագրով քննության առարկա հանդիսացող ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են ամբողջապես, իսկ սույն ընթացակարգի շրջանակներում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն առաջարկվող փաստաթղթերը շտկել է մասնակի: Ընդ որում, հարկ է փաստել, որ նախկինում կայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 որոշմամբ իրավական հիմքը հանդիսացել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, իսկ փաստական հիմքը՝ որակավորման փաստաթղթեր ներկայացնելը: Ուստի, նման պայմաններում Բողոքներ քննող անձի կողմից նախկինում կայացված որոշման փաստական հիմքերի տարբերությունը չի կարող հանգեցնել այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ու մեկնաբանությունների կիրառմանը սույն ընթացակարգի քննության շրջանակներում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի տվյալ պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15175-2020 գրությամբ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/237 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**